

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏՈՒՐՔԸ ԵՒ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ 1918-1923-ԻՆ

Կ. ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Սիլվարթ Մալխասեան

Պատմության ինստիտուտի հայցորդ,
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդասյան 24/4
Էլ. հասցե՝ silvamalhasyan@yahoo.com
ORCID: 0000-0001-5152-8516

Հոդվածը ներկայացվել է 08.10.2023, գրախոսվել է 06.02.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-84

Ամփոփում

1918 թ. Մուղրոսի զինադադարից հետո Կ. Պոլսի հայ համայնքի և հայոց պատրիարքարանի առջև ծառացան ոչ միայն տեղական բնույթի անհետաձգելի հարցեր, այլև համազգային նշանակության մարտահրավերներ: Վերջիններից էին որբերին վերադարձնելը օտար ընտանիքներից, գաղթականներին և տարագրվածներին հայրենի եզերքներ տեղափոխելը, ինչպես և այս ամենին վերաբերող խնամատարության խնդիրները: 1919 թ. փետրվարին ստեղծվեց «Հայ ազգային խնամատարություն» անվամբ կառույցը, որի շուրջ խմբվեցին տարբեր միություններ և ըկերություններ: Հենվելով Ազգային սահմանադրության համապատասխան հոդվածների վրա (90, 91)՝ պատրիարքարանը վերականգնեց ազգային տուրքի սկզբունքը՝ սահմանելով «Հայրենիքի տուրք»: Ըստ այդմ, Ազգային ժողովը 1919 թ. սեպտեմբերի 26-ին ընդունեց համապատասխան օրենք՝ տուրքի հիմքերի, դրա գանձման ձևի ու չափերի, վերահսկողության ներկայացուցչական բնույթի, տուրքից խուսափողների նկատմամբ կիրառվող սանկցիաների և այլնի վերաբերյալ:

Տուրքի գանձումը կազմակերպվեց նաև Կ. Պոլսից դուրս՝ Զմյուռնիա, Կոնիա, Աքքեհիր [Աքաքիր], Քյոթահիա և այլ քաղաքներում, Ռումինիայում, Սերբիայում և Մակեդոնիայում:

1919-1921 թթ. Կ. Պոլսում հարկատուների թիվը կազմել էր 12.808 մարդ, որոնք վճարել էին 555.265 ոսկի: Հայ հարանվանություններից (այլադավան հայերից) գանձվել էր 12.800 ոսկի:

Կ. Պոլսի և այլ համայնքների հայությունն այդ ճակատագրական օրերին պատվով կատարեց իր հայրենասիրական պարտականությունը:

Բանալի բառեր՝ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւն, Կ. Պոլսոյ հայ համայնք, Ազգային Տուրք, Ազգային Ժողով, Քաղաքական Ժողով, Զաւէն Պատրիարք, Ազգային Սահմանադրութիւն:

Ներածություն

Հոկտեմբեր 1918-ին ստորագրուած Մուտրոսի զինադադարէն ետք, Կ. Պոլիս լեցուեցաւ հայոց այրիներով, որբերով եւ տարագրեալներով: Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը եւ Հայ համայնքը այդ օրէն սկսեալ մեծ ջանքեր ի գործ դրին՝ զանոնք փրկելու եւ տառապեալներու վերքերուն դարման ըլլալու

համար: Հաստատուեցան Հայ Ազգային Խնամատարութիւն, զանազան օգնութեան միութիւններ եւ ընկերութիւններ: Այս հաստատութիւնները նախ փորձեցին խնդիրներուն լուծում գտնել նուիրատուութիւններով եւ հանգանակութիւններով, բայց կարճ ժամանակ յետոյ, մեծապէս զգալի դարձաւ մշտական եկամուտի մը կարիքը: Ահաւասիկ այս ուղղութեամբ անհրաժեշտ միջոցներէն մէկը դարձաւ Ազգային Տուրքի դրութիւնը: Տուրքի կանոնը վերահաստատուեցաւ 26 Սեպտեմբեր 1919ին եւ ի զօրու եղաւ այդ թուականէն սկսեալ: Տուրքի գանձումները կատարուեցան ամենայն խստութեամբ: Տուրքէ ձեռք ձգուած հասոյթները որոշ ժամանակի մը համար կատարեցին իրենց դրական դերը՝ ազգի վերքերը դարմանելու գործին մէջ:

Օսմանեան Կայսրութեան եւ Դաշնակից Պետութեանց միջեւ 30 Հոկտեմբեր 1918ին կնքուած Մուտրոսի զինադադարը, Կայսրութեան զուգահեռ, փոխեց նաեւ Պոլսահայ համայնքի ճակատագիրը:

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանն ու Հայ համայնքը այդ օրէն սկսեալ արեւմտահայութեան վերազարթօնքի համար յաւելեալ ճիգեր վատնեցին, ի տես մեծ ու դժուարին մարտահրաւերներուն, որոնց կարգին էին՝ որբերու ազատագրումը, գաղթականներու եւ տարագրեալներու իրենց հայրենական հողեր վերադարձը, նաեւ բոլորին փրկութեան համար կատարելի խնամատարութեան հարցերը:

Վերոյիշեալ դժուարին հարցերը լուծելու եւ զանոնք յաջողութեամբ պսակելու նպատակաւ Պատրիարքարանի նախաձեռնութեամբ կազմուեցան Հայ Որբախնամ եւ Տարագրեալներու Կեդրոնական Յանձնաժողովներ՝ որոնք 28 Փետրուար 1919-ին համախմբուեցան՝ «Հայ Ազգային Խնամատարութիւն» անուան տակ¹: Այս հաստատութեան առընթեր, նոյն հարցերու շուրջ օգտակար ըլլալու համար աշխատեցան նաեւ զանազան միութիւններ եւ ընկերութիւններ²: Անոնցմէ մէկ մասը նորահաստատ էր, իսկ միւս մասը, կրկին բացուելով, աշխատութեան լծուեցաւ 19 Հոկտեմբեր 1918-ին, Ազգային Սահմանադրութեան վերահաստատումով³:

Պատրիարքարանն ու Ազգային Խնամատարութիւնը նախ փորձեցին խնդիրներու մատակարարման հարցը հարթել նուիրատուութիւններով եւ հանգանակութիւններով⁴, բայց կարճ ժամանակ յետոյ զգալի դարձաւ

¹ Զաւէն Արքեպս. 1947, 280:

² Հաստատուած միութիւններու եւ ընկերութիւններու կարգին են՝ Հայ Կարմիր Խաչ, Ռահվիրայ Տարագրելոց Աշխատանքի Միութիւն, Փոքր Հայք, Կոչնակ Տիկնանց Միութիւն, Շանթ Միութիւն, Երեան Միութիւն, Հայրենասնուէր Միութիւն, Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւն, Որբասէր Մանկանց Միութիւն, Յայգալոյս Որբերու Հոգատար Մարմին, Աղջկանց եւ Երիտասարդաց Միութիւն եւլն:

³ 1863-ի Ազգային Սահմանադրութեան 1916 թուականին Օսմանեան Պետութեան կողմէ ջնջումով միութիւններն ալ դադրած են գործունէութենէ: Սահմանադրութեան ջնջումէն յետոյ գործադրութեան դրուած էր Կաթողիկոս-Պատրիարք Կանոնագրութիւնը: Այս վերջինը 19 Հոկտեմբեր 1918-ին օրէնքով կը դադրի ի զօրու ըլլալէ եւ կը վերահաստատուի Ազգային Սահմանադրութիւնը:

⁴ Զաւէն Արքեպս. 1947, 280:

մշտական եկամուտի մը կարիքը: Ուստի որոշուեցաւ վերստին ի զօրու դարձնել «Ազգային Տուրք»ի դրութիւնը: Թէեւ 1881 եւ 1885 թուականներուն, գրքոյններով հրատարակուած էր յիշալ օրէնքը՝ «Ազգային ուղղակի տուրք» անուան տակ⁵, բայց ժամանակի ընթացքին, գանձումներու մէջ եղած թերութիւններու պատճառաւ օրէնքը այլեւս գրկուած էր որեւէ շահեկանութենէն⁶:

Մուտրոսի Զինադադարէն ետք, Պատրիարքարանը, այս անգամ հիմնուելով 1863 թուակիր Ազգային Սահմանադրութեան 90-րդ եւ 91-րդ յօդուածներուն վրայ, վերահաստատեց «Ազգային Տուրք»ի դրութիւնը⁷: Անունը կոչուեցաւ «Հայրենիքի տուրք», քանի որ պիտի գործածուէր այն ազգակիցներուն համար, որոնք թշուառ եւ անտերունջ մնացած էին Պոլսոյ մէջ ու կ'ուզէին վերահաստատուիլ իրենց հայրենիքը⁸:

Տուրքի հաստատման նիւթը բաւական երկար քննարկուեցաւ Ազգային Ընդհանուր Ժողովի 19 Սեպտեմբեր 1919 թուակիր նիստի ընթացքին: Ժողովականներէն յատկապէս Տօթթ. Ս. Թէրզեան ամբողջութեամբ ձեռք առաւ խնդիրը եւ ծանրացաւ տուրքի անբաւարարութեան վրայ, պնդելով որ այդ գործառոյթը չի կրնար դիմագրաւել ազգին ծովածաւալ կարիքները: Ան առաջարկեց կազմակերպել ընդհանուր հանգանակութիւն եւ կոչ ուղղեց զանազան գաղութներուն՝ նիւթական օժանդակութիւն կատարելու իրենց դրամահաւաքին: Տօթթ. Ս. Թէրզեան խօսեցաւ նաեւ եւրոպական քաղաքներու մէջ հանգանակութիւններ իրականացելու կամ ուրիշ միջոցներ խորհելու մասին: Իր առաջարկը չընդունուեցաւ: Երեսփոխաններ դժուարացան կարծիք գոյացնելու նաեւ տուրքի ձեւի, քանակի եւ կիրարկումի որոշման շուրջ⁹: Ի վերջոյ գործը յանձնեցին յատուկ յանձնաժողովի մը, որուն անդամ ընտրուեցան Պոլսահայ համայնքի յայտնի ազգայիններէն Հ[մայեակ] Խոսրո-

⁵ Կանոնագիր Ազգային Ուղղակի Տրոց Կեդրոնական Գաւառական եւ Թաղական Կ. Պօլիս, Գաւառական Տպագրութիւն, 1881: Կանոնագիր Ազգային Կեդրոնական Ուղղակի Տրոց Վաւերացեալ Յազգային Երես Ժողովէ Ի նիստ Ե., Սարըեան Տպագրութիւն, 5 Յուլիս 1885:

⁶ Այդ պատճառաւ ալ Առաջին Աշխարհամարտի նախօրեակին գանձումներու հարցը նիւթ կ'ըլլայ Ազգային Ընդհանուր Ժողովի մէջ եւ օրէնքը փոքր փոփոխութիւններով դարձեալ ի զօրու կը դառնայ: Վարչութիւնը մանաւանդ դէմ եղած է 1908-էն առաջուայ տարիներու չվճարուած տուրքերու ջնջումի առաջարկին. Երեսփոխան ընտրուիլ եւ ընտրել փափաքողներ անպայման վճարած պէտք է ըլլային իրենց տուրքի բաժինը օրէնքի քուէարկութեան թուականէն սկսեալ: Ազգային Տուրքը, Ազատամարտ, 7/20 Յունիս 1914, 1532, 2-3:

⁷ Յօդուած 90: Ամեն ազգային անհատ՝ որ չափահաս է եւ վաստակի ու շահու տէր, պարտական է տրօք մասնակից ըլլալ Ազգային ծախուց: Այս տուրքը տարեկան է, եւ բաշխման հիմն կը բռնուի իւրաքանչիւր անհատի կարողութիւնը: Յօդուած 91: Ազգային տուրքը երկու տեսակ է. Մէկը ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է եւ կը հաւաքուի Պատրիարքարանի կողմէ Ազգային Կեդրոնական Սնտուկին համար, իսկ միւրը մասնաւոր՝ որ իւրաքանչիւր թաղի մասնաւոր ծախուց յատկացեալ է, եւ կը հաւաքուի թաղական խորհրդոյ կողմէ՝ թաղական սնտուկներու համար: Ազգային Սահմանադրութիւն Հայոց 1863, 51:

⁸ Զաւէն Արքեպս. 1947, 281:

⁹ Ղազարեան 2021, 82:

վեան, Լ[եւոն] Սաաթճեան, Ս[արգիս] Սրենց, Տըթ. [Ստեփան] Թէրզեան եւ Լ[եւոն] Տնտեսեան¹⁰: Յանձնաժողովը օրինագիծի պատրաստութիւնը աւարտելէ ետք, զայն փոխանցեց Զաւէն Պատրիարքին: Պատրիարքի կոչին¹¹ ընդառաջելով, Ազգային Ժողովի երեսփոխաններ ներկայ գտնուեցան 26 Սեպտեմբեր 1919 թուակիր նիստին. տասնըմէկ յօդուածէ բաղկացեալ օրէնքը միաձայնութեամբ ընդունուեցաւ¹², յետոյ մամուլի միջոցաւ տեղեկացուեցաւ նաեւ համայնքին¹³ եւ ի զօրու նկատուեցաւ հրատարակութեան թուականէն սկսեալ:

1919 թուակիր Հայրենիքի տուրքի կանոնները¹⁴

Տուրքը հիմնուած էր իւրաքանչիւր անհատի իր կարողութեան համեմատ տուրք վճարելու կանոնին վրայ, որ ներկայացուեցաւ կանոնագրի առաջին յօդուածով:

Օրէնքի երկրորդ եւ երրորդ յօդուածներով ճշդուեցաւ տուրքի վճարման ձեւը: Տուրքը միանուագ կամ ամենամսեայ էր: Այսինքն ամէն Հայ անհատ պարտաւոր էր վճարել կա՛մ մէկ անգամէն միանուագ եւ կամ ամէն ամիս՝ որոշ գումարի ձեւով: Վճարումը պէտք է կատարուէր Քաղաքական Ժողովի վերջնական գնահատումէն ետք մինչեւ մէկ ամսուայ ընթացքին:

Չորրորդ եւ հինգերորդ յօդուածները կը պատկանէին տուրքի գնահատման եւ գանձումի պարագաներուն: Օրէնքի համաձայն, Կեդրոնական Գնահատող Մարմին մը ընտրուած էր ժողովուրդի ամէն դասի ներկայացուցիչներէն՝ ինչպէս վաճառականներ, եագմաճիներ, ոսկերիչներ, սեղանաւորներ եւ կալուածատէրեր¹⁵: Մարմինը, իւրաքանչիւր անձի նիւթական կարողութիւնը նկատի առնելով, կը գնահատէր վճարուելիք տուրքի չափը¹⁶: Ըստ այս յօդուածներու, Քաղաքական Ժողովը ամէն թաղի մէջ կ'ընտրէր գնահատող մարմիններ, որոնք կը ճշդէին իրենց թաղի մէջ ապրող անձերու ունեցուածքը: Գնահատման առնչութեամբ դիտողութիւն ունեցողներ տասը օրուան մէջ կը ներկայացնէին իրենց բողոքը այս մարմիններուն, որոնք իրենց կարգին կը պարտաւորուէին մէկ շաբթուան մէջ վերջնական որոշում տալու:

¹⁰ Ազգ. Ժողով Հայրենիքի Տուրքի Օրինագիծը, Ժամանակ, 7/20 Սեպտեմբեր 1919, 3629, 1-2:

¹¹ Ս. Պատրիարքը, Ժամանակ, 11/ 24 Սեպտեմբեր 1919, 3632, 2:

¹² Ղազարեան 2021, 90:

¹³ Արձագանգ, Արագած, 5 Հոկտեմբեր 1919, 37 (495):

¹⁴ Հայրենիքի Տուրքի Օրէնքը Ընդունուած, Ժամանակ, 14/27 Սեպտեմբեր 1919, 3635, 1-2: Ազգային Ժողովը Հայրենիքի Տուրքի Օրինագիծը, Ճակատամարտ, 27 Սեպտեմբեր, 269 (2090), 2:

¹⁵ Գնահատիչ Մարմնոյ անդամները զանազան միութիւններու նիստերուն մասնակցելով տուրքի մասին տուած են բացատրութիւններ որոնցմէ մէկը եղած է Պոլսահայ Բժշկական միութիւնը: Հայրենիքի Տուրքը եւ Հայ Բժշկական Միութիւնը, Ժամանակ, 27/10 Դեկտեմբեր 1919, 3697, 2:

¹⁶ Հայրենիքի Տուրքը, Ժամանակ, 5/18 Հոկտեմբեր 1919, 3652, 2:



Նկ. 1. Կանոնագիր Ազգային ուղղակի տրոց Կեդրոնական Գաւառական եւ Թաղական Կ. Պօլիս, Գավաթեան տպագրութիւն, 1881

Նկ. 2. Ազգային խնամատարութեան ելմտական կեդրոնական յանձնաժողովի Գատըգիւղի մասնաճիւղի կողմէ տրուած անդդորագիր մը, որով կը հաստատուի որ խնդրոյ առարկայ անձը եւ ընտանիքի անդամները զերծ են Հայրենիքի տուրքէն



Նկ. 3. Ազգային խնամատարութեան ելմտական կեդրոնական յանձնաժողովը, հիմնուելով Բաբերդի հայրենակցական միութեան վկայութեան վրայ, կը հաստատէ որ Ռոմանիա ճամբորդելիք հայրենակից մը զուրկ է հասոյթի միջոցներէն եւ զերծ կը մնայ Հայրենիքի տուրքէն



Նկ. 4. Կանոնագիր Ազգային Կեդրոնական ուղղակի տրոց վաւերացեալ յազգային երես. ժողովէ ի նիստ Ե, Սարըեան տպագրութիւն, 5 յուլիս 1885



Ազգային Խնամատարութիւնը, պաշտօնեաներու մասնակցելու պարագան ալ նկատի առնելով, հաստատած էր զանազան սակեր: Օրինակ, ուսուցիչներ հայրենիքի տուրքը կը վճարէին իրենց ստացած գումարի համեմատ: 25-49 ոսկիի միջեւ ամսական ստացողներ ամիսը՝ 25 դրուշ, 50-75 ստացողներ՝ 50, 75-100 ստացողներ 100, 100էն աւելի ստացողներ՝ 200 դրուշ տուրք կը վճարէին¹⁷:

Գանձումները կը կատարուէին Քաղաքական Ժողովի կողմէ ընտրուած Ելմտական Յանձնախումբի միջոցաւ: Տուրքի հաշուետոութիւնը Ազգային Ժողովին կը ներկայացուէր Քաղաքական Ժողովի կողմէ՝ երեք ամիսը անգամ մը: Ազգային Ժողովը իր համարակալութեան դիւանին միջոցաւ քննութիւնները կատարելէ ետք, կա՛մ զանոնք կը վաւերացնէր, կա՛մ դիտողութիւններով ետ կը դրկէր Քաղաքական Ժողովին:

Եօթներորդ յօդուածը կը ձեւաւորէր տուրքէ խոյս տուողներու դէմ ազգային իշխանութեան կողմէ կիրարկուելիք պատիժները: Խիստ էին թէ՛ որոշուած պատիժները եւ թէ՛ նոյնքան խիստ՝ նաեւ պատիժներու կիրառման պարագաները: Պատրիարքարանը շրջաբերականներով կը հրապարակէր եկեղեցական դասը եւ թաղային խորհուրդները՝ չկատարել պահանջները այն ազգայիններու, որոնք չէին վճարած տուրքը¹⁸: Տուրքէ խոյս տուողներու անունները կը հրատարակուէին թերթերու մէջ, միաժամանակ անուններու ցանկը կը կախուէր տուեալ անձի ապրած թաղի եկեղեցւոյ բակին մէջ: Այդ ազգայինները կը զրկուէին Թաղերու մէջ ազգային երեսփոխանական ընտրութիւններուն *ընտրուող* եւ *ընտրող* ըլլալու իրաւունքներէն¹⁹: Օրինակ, երբ 1921-ի ազգային երեսփոխանական Ժողովը կը վաւերացնէր նոր Քաղաքական Ժողովի կազմը, Յակոբ Ճօլօլեան [Սիրունի] կը հարցնէր թէ նորընտիր անդամները իրենց հայրենիքի տուրքը վճարա՞ծ էին թէ ոչ: Եթէ չէին վճարած, իրաւունք չունէին մաս կազմելու Քաղաքական Ժողովին: Կ'ըսէր որ պէտք է այդ պարագան ստուգուէր եւ տեղեկացուէր Ազգային Ժողովին: Ժողովն ալ կ'ընդունէր այս տեսակետը²⁰: Տուրքը չվճարողներ կը զրկուէին նաեւ մկրտութեան, հարսանիքի եւ յուղարկաւորութեան հանդիսութիւններէ: Այս ծանր պատիժներու նպատակը տուրքի գանձումը եւ արդիւնաւէտութիւնը ապահովելու համար էր: Իրապէս վերոյիշեալ պատիժները ազդեցիկ էին, քանզի ազգին անդամները չէին ուզեր որ հայոց պատմութեան էջերուն վրայ իրենց անունները սեւ գիրերով արձանագրուէին որպէս անհատներ, որոնք կը զլանային օգնութիւն յատկացնել դժբախտ տարագրեալներուն եւ որբերուն:

¹⁷ Պաշտօնեաներու Ազգ. Տուրքը, Ճակատամարտ, 16 Յունիս 1920, 479 (2300), 2:

¹⁸ Պատրիարքարանը, Ժամանակ, 11/24 Մարտ 1920, 1784, 2:

¹⁹ Բերայի Ազգ. Երեսփոխանական Ընտրութիւն, Ճակատամարտ 28 Մայիս 1920, 464 (2285) 3: Կէտիկփաշա, Ժամանակ, 27 Հոկտեմբեր/9 Նոյեմբեր 1919, 3671, 2:

²⁰ Ազգային Երեսփոխանական Ժողովը, Ճակատամարտ, 9 Ապրիլ 1921, 727 (2548), 2:

Պոլսոյ թաղերու ելմտական մասնաճիւղերը գանձումի համար թերթերու ազդերով կը հրաւիրէին իրենց թաղեցիները՝ ըլլայ Առաքելական, ըլլայ Հայ Հռոմէական կամ Հայ Բողոքական, որոնք հայրենիքի տուրքի յանձնառութիւնը ստորագրած ըլլալով, չէին վճարած յիշեալ պարտքը²¹։ Հայ Կաթողիկէ²² եւ Բողոքական համայնքները²³ նոյնպէս այդ քայլին կը հետեւէին։ Հայ Բողոքականաց Ազգապետարանը պաշտօնական յայտարարութեամբ իր համայնքը կը հրաւիրէր ազգային պարտականութիւնը կատարելու։ Երբ այդ համայնքի անդամները կը դիմէին Ազգային Փոխանորդարան՝ ինքնութեան գիր եւ կամ ժառանգական վկայագիր ստանալու, պարտաւոր կ'ըլլային ի ձեռին ունենալ Հայրենիքի Տուրքը վճարած ըլլալու ստացագիրը²⁴։

Զաւէն Պատրիարքը Կրօնական Ժողովի հոգեւորականներուն մասնաւոր խնդրանք կը ներկայացնէր, որպէսզի անոնք իրենց շրջաններուն մէջ հարկ եղած ջանքերը ի գործ դնէին՝ տուրքի խնդիրը յաջողութեամբ պսակելու համար²⁵։

Հայրենիքի տուրքը Կ. Պոլսէ դուրս

Քաղաքական Ժողովի հաւանութեամբ եւ Զաւէն Պատրիարքի հրահանգով տուրքի վճարումը կազմակերպուեցաւ Կ. Պոլսոյ սահմաններէն դուրս եւս։ Հայ հոգեւորականներ Օսմանեան Կայսրութեան զանազան քաղաքներու մէջ, որոնց շարքին կարելի է յիշել՝ Իզմիր, Գոնիա, Էսքիշէհիր, Ազշէհիր, Քէօթահիա եւլն., կազմակերպեցին տուրքի հաստատման գործընթացները²⁶։ Տուրքը օտար երկիրներու մէջ կազմակերպելու նպատակաւ պաշտօն յանձնուեցաւ Գնէլ Եպիսկոպոս եւ Ս[արգիս] Սրենցէ բաղկացեալ պատուիրակութեան։ Անոնց տրուեցաւ համապատասխան յանձնարարագիր եւ կոնդակ՝ օտար երկիրներու կառավարութեանց եւ տեղական ազգային իշխանութեանց բացատրելու եւ տեղեկացնելու Հայ որբերու եւ տարագիրներու կարիքները։ Պատուիրակութիւնը Պիքրէշ, Քէօսթէնճէ²⁷ եւ Ռումանիոյ զանազան կարեւոր քաղաքներ²⁸, Ֆօզշան²⁹, Սերպիոյ եւ Մակեդոնիոյ մէջ հաւաքոյթներով եւ բանախօսութիւններով տուրքին նպատակը բացատրեցին

²¹ Ազդ, Ճակատամարտ, 3 Նոյեմբեր 1920, 596 (2417), 3։ Բերացիներու, Ճակատամարտ, Դեկտեմբեր 1920, 621 (2442), 2։

²² Հայ Հռոմէականները եւ Հայրենիքի Տուրքը, Ժամանակ, 17/30 Ապրիլ 1920, 3814, 2։

²³ Հայ Բողոքականներ եւ Հայրենիքի Տուրքը, Ժամանակ, 31 Դեկտ 1919/12 Յունուար 1920, 3726, 2։

²⁴ Հայրենիքի Տուրքը, Ժամանակ, 15/28 Սեպտեմբեր 1919, 3636, 2։

²⁵ Հայրենիքի Տուրքը եւ Հայ Եկեղեցականութիւնը, Ժամանակ, 28 Նոյեմբեր-11 Դեկտեմբեր 1919, 3698, 3։

²⁶ Հայրենիքի Տուրքը Գոնիայի Մէջ, Ժամանակ, 22 Դեկտեմբեր 1919 /4 Յունուար 1920, 3719, 2։

²⁷ Պատրիարքական Պատուիրակութիւնը Պիքրէշի Մէջ, Ճակատամարտ, 16 Նոյեմբեր 1921, 913 (2734), է 2։

²⁸ Հ. Տուրք Արտասահմանի Պատուիրակութեան Գործունէութիւնը, Երկիր, 3 Յունուար 1922, 655, 3։

²⁹ Հայրենիքի Տուրքը Ռումանիոյ Մէջ, Երկիր, 22 Նոյեմբեր 1921, 620, 3։ Հ. Տուրքի Արտասահմանի Պատուիրակութիւնը Ֆօզշանի Մէջ, Ճակատամարտ, 20 Դեկտեմբեր 1921, 942 (2768), 2։

ժողովուրդին եւ կազմեցին մասնաճիւղեր³⁰: Պատրիարքարանի Ելմտական Կեդրոնական Յանձնաժողովը Ռումանիոյ մէջ գործող եօթը մասնաճիւղերու վաւերացումով, հայերէն-ռումաներէն ստացագիր եւ կնիքներ դրկեց: Պատրիարքարանի կողմէ ուղարկուեցան նաեւ օրհնութեան գիրքեր եւ քաջալերական գրութիւններ մասնաճիւղերու եւ մանաւանդ այդտեղի կանանց՝ որոնց ջանքերը շատ ազդեցիկ էին գործի յաջողութեան մէջ³¹: Պալքանեան երկիրներու մէջ ձեռք ձգուած լաւ արդիւնքէն գոհ մնալով Ելմտից Կեդրոնը որոշեց նոյնը կիրարկել Ամերիկայի մէջ եւ գործի պատասխանատուութիւնը յանձնեց Հրաչ Երուանդի եւ Հ. Ամատունիի³²:

Արդիւնք՝ Հայրենիքի տուրքի

Օրէնքի գործադրութիւնը վերապահուեցաւ Ազգային Կեդրոնական Ելմտական Յանձնաժողովին, իսկ գոյացած գումարներու մատակարարութիւնը տրուեցաւ Ազգային Խնամատարութեան:

Ըստ Ելմտական Կեդրոնական Յանձնաժողովի հաշուեցոյցի, որ Պատրիարքարան յանձնուած էր 1920-ի Ապրիլ ամսուան առաջին շաբաթը, մուտքի գլխաւոր աղբիւրը Հայրենիքի Տուրքն էր: 311.908 ոսկինոց ընդհանուր մուտքին 116.088 ոսկին կուգար այդ տուրքէն³³: Դարձեալ ըստ Յանձնաժողովի տեղեկագրին, տուրքի հաստատումէն մինչեւ 31 Օգոստոս 1921, այսինքն երկու տարուայ ընթացքին, Կ. Պոլսոյ մէջ վճարում կատարող հարկատուներու թիւը կազմած էր 12.808 հոգի, որոնք ընդհանուր առմամբ վճարած էին 555.265 ոսկի: Պարտք մնացած էր 94.043 ոսկի, այսինքն իրենց յանձնառութեան 1/5ը³⁴:

Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի տուած տեղեկութեան համաձայն, նոյն շրջանին համայնքի անդամներէն միանուագ եւ ամսական ըլլալով ընդհանուր կերպով գանձուած էր 7800 ոսկի, իսկ Հայ Բողոքականներէ 5000 ոսկի³⁵:

Պոլսոյ եւ այլ հայ համայնքներու մեծամասնութիւնը կատարած էր իր պարտականութիւնը: Ինչպէս Զաւէն Պատրիարքն ալ կը նշէ իր յուշերուն մէջ՝ «տուրքէն խուսափող չեղաւ եւ շատեր իրենց նիւթական կարողութիւններէն վեր գումարներ վճարեցին³⁶»: Նոյնպէս Վահան Թէքէեան, պատմելով

³⁰ Հայրենիքի Տուրքը եւ Արտասահմանի Հայերը, Վերջին Լուր, 11 Հոկտեմբեր 1921, 2305, 3:

³¹ Հ. Տուրք Արտասահմանի Պատուիրակութեան Գործունէութիւնը, Ճակատամարտ, 7 Յունուար 1922, 958 (2779), 4:

³² Հայրենիքի Տուրքի Ամերիկեան Պատուիրակները, Վերջին Լուր, 24 Փետրուար 1922, 2421, 3:

³³ Հայրենիքի Տուրքի Վեցամսեայ Հաշուեկշիռը, Ժամանակ, 9/22 Ապրիլ 1920, 3807, 2:

³⁴ Հայրենիքի Տուրքի Տարեկան Արդիւնքը, Ժողովուրդի Ձայնը, 3/16 Դեկտեմբեր 1921, 971 (4256), 2:

³⁵ Հայրենիքի Տուրքի Արդիւնատրումը, Ժողովուրդի Ձայնը, 8/21 Դեկտեմբեր 1921, 975 (4260), 3:

³⁶ Զաւէն Արքեպս. 1947, 281:

Եգիպտոսի մէջ տուրքի պարտաւորիչ ըլլալու մասին³⁷, կը տեղեկացնէր որ առաջին տարին ձեռք ձգուած էր մեծ արդիւնք մը: Այս յաջողութիւնը գրաւականն էր բոլոր կուսակցութիւններու եւ մարմիններու համագործակցութեան եւ հաւաքական աշխատութեան: Հակառակ այս բոլորին, տուրքը կարճ ժամանակի մէջ չկրցաւ հակակշռի տակ առնել Խնամատարութեան ամբողջ պիւտճէն, ինչպէս Զաւէն Պատրիարք կ'արտայայտէ իր յուշերուն մէջ³⁸:

Այնուհանդերձ, ի վերջոյ պէտք յիշել որ «Հայրենիքի Տուրք»ը Պոլսահայերու կողմէ կանոնաւոր հիմքերու վրայ դրուած, օրինաւոր մարդահամարներով կատարուած, հաշիւները ժողովուրդին ներկայացուած շատ կազմակերպուած գործառոյթ մը եղաւ, որոշ ժամանակ մը իր դրական դերը կատարեց ազգի վերքերը դարմանելու գործին մէջ:

Եզրակացութիւն

Հայրենիքի տուրքը, հիմնաւորուած՝ Ազգային Սահմանադրութեան 90-րդ եւ 91-րդ յօդուածներով, գործածուած էր ի նպաստ բոլոր այն ազգակիցներուն, որոնք անտերունչ մնացած էին եւ ցանկութիւն ունէին վերահաստատուիլ իրենց հայրենիքը: Պայմանները ճշդուած էին յատուկ կանոններով եւ վճարման ձեւերով: Գումարի չափը որոշուած էր ժողովուրդի զանազան հատուածներու ներկայացուցիչներու մասնակցութեամբ կազմուած Կեդրոնական Գնահատող Մարմնի կողմէ, իսկ համապատասխան տեղեկագրերը եռամսեայ դրութեամբ դարձած էին պատկան ժողովի ուշադրութեան առարկայ:

Տուրքերէն խուսափողները ենթարկուած էին խիստ պատիժներու: Անոնց պահանջները ի կատար չէին ածուած, այդ մարդոց անունները հրատարակուած էին թերթերուն մէջ, կամ անոնց անուն-մականունները ցանկերը կախուած էին անոնց ապրած թաղերու եկեղեցիներու բակին մէջ: Տուրքը չվճարողներ միաժամանակ զրկուած էին նաեւ մկրտութեան, հարսանիքի եւ յուղարկաւորութեան հանդիսութիւններէ: Այս բոլորը տուրքի գանձումը եւ արդիւնաւետութիւնը ապահովելու, դժբախտ տարագրեալներուն եւ որբերուն օգնելու համար էին:

Հակառակ որ տուրքը չէր յաջողած հակակշռի տակ առնել Խնամատարութեան ամբողջ պիւտճէն, այնուհանդերձ պէտք է հաստատել որ «Հայրենիքի Տուրք»ը հանդիսացած է կազմակերպեալ գործառոյթ մը՝ դրական դերակատարութիւն ունենալով ազգին ցաւերուն դարման ըլլալու գործին մէջ:

³⁷ Արեւ թերթը Գահիրէէն տուրք վճարողներու ցանկերը կը հրատարակէ: Պատույ Սիւնակ Հայրենիքի Տուրքին, Արեւ, 8 Յունուար, 1919, 103 (568), 2:

³⁸ Զաւէն Արքեպս. 1947, 28:

Օգտագործված գրականություն

- Ազգային Սահմանադրութիւն Հայոց 1863, Կ. Պոլիս, Կ.Յ. Միսիկեանի տպ., 54 էջ:
Զաւէն Արքեպս. 1947, Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, «Նոր Աստղ» տպ., 424 էջ:
1881, Կանոնագիր Ազգային Ուղղակի Տրոց Կեդրոնական Գաւառական եւ Թաղական, Կ. Պոլիս, Գաւաթեան Տպ., 8 էջ:
5 Յուլիս 1885, «Կանոնագիր Ազգային Կեդրոնական Ուղղակի Տրոց Վաւերացեալ Յազգային Երես Ժողովէ Ի նիստ Ե.», Սարըեան Տպ., 5 էջ:
Ղազարեան Վ. 2021, Համահաւաք Ատենագրութիւններ Թուրքիոյ Հայոց Ազգային Երեսփոխանական Ժողովի Համագումար Ազգային Ժողովի եւ Համազգային Խորհուրդի (1919-1922), Ամերիկա, 882 էջ:

НАЛОГ РОДИНЕ И ЕГО ВЗИМАНИЕ В 1918-1923 ГГ. В КОНСТАНТИНОПОЛЕ

Силварт Малхасян

Резюме

После Мудросского перемирия в 1918 г. константинопольская армянская община столкнулась с рядом вопросов не только местного, но и общенационального характера. В ряду этих вопросов был вопрос возвращения на родину сирот, нашедших убежище в чужих семьях, беженцев и эмигрантов, равно как и вопросы их обустройства и организации опеки.

В 1919 г. была создана структура «Армянская национальная опека», вокруг которой объединились различные союзы и общества. Основываясь на соответствующих статьях Национальной конституции (ст. 90, 91), патриаршество восстановило систему национального налога, определив это как «Налог Родины». В соответствии с этим 26 сентября 1919 г. Национальное собрание приняло закон об основе, формах и размерах взимаемого налога, контроле и санкциях в отношении лиц, уклоняющихся от них.

Помимо Константинополя, налоги взимались и в других городах – Смирне, Кони, Акшехире, Кётахии и других местностях, а также в Румынии, Сербии и Македонии.

В 1919-1921 гг. число налогоплательщиков в Константинополе составило 12.808 чел. Последние вносили в казну 555.265 золотых монет, а с армян иных вероисповеданий взималось 12.800 золотых монет.

В эти судьбоносные дни армяне Константинополя и других общин с честью выполнили свой патриотический долг.

Ключевые слова – константинопольское Армянское патриаршество, константинопольская армянская община, национальный налог, Национальное собрание, Гражданское собрание, патриарх Завен, Национальная конституция.

TAX TO THE MOTHERLAND AND ITS USAGE IN 1918-1923 AT CONSTANTINOPLE

Silvart Malhasyan

Abstract

After the armistice of Armenia in 1918, the Armenian community of Constantinople and the Armenian Patriarchate faced not only urgent local problems, but also challenges of nationwide significance. Among the latter were the return of orphans from foreign families, the transfer of immigrants and displaced people to the homeland, as well as the problems of foster care related to all this. In February 1919, the structure called "Armenian National Guardianship" was created, around which various unions and associations gathered. The Patriarchate, relying on the relevant articles of the National Constitution (90, 91), restored the principle of national debt by defining "Patriotic debt". Accordingly, on September 26, 1919 the National Assembly adopted a relevant law based on the tax, the form and amounts of its collection, the representative nature of control, the sanctions applied to tax evaders, etc.

It also organized toll collection outside Istanbul in Smyrna, Konya, Akshehir, Kyotania and other cities in Romania, Serbia and Macedonia.

In the years 1919-1921, the number of taxpayers in Constantinople was 12,808 people, who paid 555,265 gold. 12,800 pieces of gold were collected from Armenians (Armenians of other faiths).

The Armenian community of Istanbul and other communities honorably fulfilled their patriotic duty in those fateful days.

Key words – The Armenian Patriarchate of Constantinople, the Armenian Community of Constantinople, national tax, the National General Assembly, the Political Assembly, Zaven Patriarch, the National Constitution.